պատահում է վերև յիշածս, իսկ եթէ համարձակվեցաք ու անունը ազգանունն էլ հետը յիշեցիք, տէր Աստուած, ինչ կատաղի հայհոյանքներ են ուղղվում ձեզ վրա. յիշոց, սպառնալիք, անէծք կարկտի պէս թափվում են խեղճ թղթակցի գլխին։

Բայց ինչ կուզէ լինի, իմ կարծիքով, բարեխիղճ թղթակցի դեվիզը լինելու է «զրել անաչառութեամբ միայն ճշմարիտը, չը ծածկել ոչ մէի պակասութիւնը, թէև ազգականները լինէին և տպագրական խօսքով պաշտպանել աղքատ դասակարգին՝ ճակատագրի խորթ զաւակներին, հարուստ բուրժուաների, հարստահարիչների կամայականութիւնից, զուրս բերել մի քանի աշխարհակալների ծածուկ արարքները։ Այո, վարդերով սփռված չէ թղթակցի ճանապարհը, որովհետև նա սիրում ու պաշտպանում է ազատութիւնը։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Գանձակ, 26 դեկտեմբերի 79 թ.

Ներկայ տարւոյս սկզբումը մի քանի անձինք նուիրեցին յօգուտ «Արարատեան» ընկերութեան 230 բուբլի, որպէս զի նրա կէսը Ցարօնայ գաւառի և միւս կէսը Կիլիկիայի մէջ գտնված ուսումնարանների բարեկարգութեանց համար գործադրվի։ Այդ գումարը յանձնվեց ինձ պահպանելու համար, վասն որոյ ես էլ գրեցի ի մուտս Ս. Յովհաննէս մայր եկեղեցւոյ ժապաւենեալ մատենումը ընդ № 12, մինչև ստորագրութեան վերջանալը, որ տարաբաղդաբար հացի թանգութեան և մի քանի այլ պատճառներից տոկպեալ դեռ չէ վերջացել։

Ցարւոյս վերջանալու առթիւ անտեղի համարելով պահել յիշեալ նուիրատուութիւնը եկեղեցական գումարի մէջ, վասն որոյ և ուղարկելով ընդ սրմին երկու հարիւր երեսուն բուբլին (230 բ.), խնդրաբարար խնդրեմ հասուցանել ի տնօրինութիւն «Արարատեան» ընկերութեան, տպագրելով անուանացուցակը յետագայ նուիրատու անձանց։

—Պետրոս Նարաթեանց 100 բուբլի, Վաղարշակ Մատեոսի Յովսէփեանց 10 բուբլի, Տէր Գրիգոր Թումանեանց 5 բուբլի, Մկրտիչ Վարուշեանց 5 բ., Միքայել Ազայեանց 5 բ., Գէորգ Ցարութիւնեանց 1 բ., Աղէքսանդր Տէր Գէորգեանց 1 բ., Բալազայ Վարդանեանց 1 բ., Ներսէս և Յովհաննէս Շահլամեանք 2 բ., և եղբարք Տէր-Ներսէսեանք 100 բ։—

Բացի այս պ. Արսէն Թոխմախեանը յանձնել է ինձ իր ժողված նուէրը 48 բ., և դեռ ևս ապասիկ սառանալիքներ կան, որ չէ կարողացել ժողովել, երբ ստորագրութիւնը վերջանայ, փողերը ժողովվի և յայտնի լինեն նուիրատուաց անունները՝ այն ժամանակը մեացեալ փողերը նուիրատուաց ցուցակովը կուղարկեմ ինքս, կամ պ. Թոխմախեանցը, որ այս միջոցին բացակայ է Գանձակից։

Երեցփոխան Ն. Տէր-Ներսէսեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 15-ին պ. Սլավիանսկի տուեց իր երկրորդ կոնցերտ Թիֆլիսի Կրժօկում, իսկ յունվարի 17-ին Արծրունու թատրոնում Հասարակութիւնը շատ հաւանեց և ամեն անգամ կըրկնել էր տալիս մանաւանդ «А изъ рощи темной» խօրով երգած նոր երգը։ Արծրունու թատրոնը լի էր և այդ երեկոն շատ տաք էր անում թատրոնում, թէև գիշերը սառաչիկ ցուրտ էր։ Ուրեմն արած փոփոխութիւնները թատրոնի մէջ կատարելապէս աջողվեցան և այժմ ամենացուրտ ձմեռն էլ այդ թատրոնում տաք կը լինի։

Ստացանք բժիշկ Միրիմանեանից ներկայ 1880 թի համար նրա տարեկան տուրքը 10 բուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան։

Շաբաթ օր, յունվարի 19-ին Թիֆլիսի ռուս դերասանական խումբը տուեց մի ներկայացումն յօգուտ մեր քաղաքի մէջ նոր բացված հրէական դպրոցի։

Շնորհակալութեամբ ստացանք մի փոքրիկ կանոնադրութիւն հետեւալ վերնագրով «Уставъ общест. содѣйств. Технич.—Ремеслен. образов. на Кавказѣ» այսինքն «Տեխնիկական արհեստական կրթութեանը նպաստող ընկերութեան կանոնադրութիւն։» Այդ կանոնադրութեան մասին մի այլ անգամ կը խօսենք։ Ընկերութեան հիմնադիր մասնաժողովի նախագահը իշխանուհի Գաղարինա է, իսկ անդամների մէջ մենք տեսնում ենք տիկին Կոլիբրիակինի, պ. պ. Մոդզալէվսկու, Մամացեվի, Պոլիտկովսկու և ուրիշների անունները։

Մեզ գրում են ԱԽԱԼՑԻԽԱՅԻՑ։ «Մեր գաւառում կան եօթ գիւղեր, որոնք 1828 թվին առնված են եղել Կարապետ վարդապետի ձեռքով և որոնք այն օրից համարվում են եկեղեցու սեփականութիւն։ Այդ գիւղերից իւրաքանչիւր տարի ստացվում էր 16 հազար բուբլ եկամուտ, որով պահպանվում էին Ախալցխայի ուսումնարանները և եկեղեցիները։ Այդ գիւղերը խլվել են այժմ ժողովրդի ձեռքից հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ և կապալով տրվել են Ախալքալաքի հոգևոր իշխանութեան գործակատար Տէր Խորէն քահանային, այն պայմանով, որ սա տարեկան 10 հազար բուբլ վճարի Ս. Էջմիածնին։ Այդ կարգադրութեան պատճառով մեծ աղմուկներ են յարուցվել ժողովրդի մէջ և մեծ վնասներ են սպասվում ժողովրդի համար այդ կարգադրութեան շնորհով։ Բոլոր հանգամանքները այդ գործին վերաբերեալ, յայս ունենք չուտով պիտի հանդէս հանվեն լրագրութեան մէջ։»

Պ. Մատթէոս Տէր-Պետրոսեանց ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ ուղարկել է մեզ իր այս տարվայ 5 բուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են, որ տեղական պօլիցիան յայտնել է բոլոր գիւղերի տանուտէրերին, որ գարնանամուտին պէտք է գիւղացիներին ցանելու համար կառավարութենից բաժանվի 3,000 չետվերտ ցորեն։

Մեզ հաղորդում են ՕՐԴՈՒԲԱԴԻՑ, որ այնտեղ մեծ թանգութիւն է։ Առաջ Օրդուբադում ցորենի պուդը արժէր 50—80 կ., այժմ 3 բ. 40 կ. է ծախվում։

«Մշակի» № 4 մէջ բանասիրականի բաժնում տպած յօդուածում մի քանի սխալներ են մտել։ Մենք միայն մեր ընթերցողների ուշադրութիւն ենք դարձնում հետեւեալ վրա. առաջին երեսի չորրորդ կոլօնում, ներքևից 11-դ տողում «Կովկասեցու այդ խօսքերը»ից—յետոյ պէտք է աւելացնել «չէք կարողացել հասկանալ։ Այդ խօսքերը»։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Մեր քաղաքի բազմաթիւ չքաւոր դերդաստանների անտանելի դրութիւնը վերջապէս իր վերա դարձրեց բարեսէրտ քաղաքացիների ուշադրութիւնը։ Դէպուտատների նախագահութեամբ ժողով կազմվեց և վճռվեցաւ հանգանակութեամբ հաւաքել մի նշանաւոր դրամագլուխ այստեղի ամբարած ալիւրներից առնելու կամ Ռուսաստանից բերելու և էժան գնով գինուորներին ծախելու համար։ Հանգանակութեամբ արդէն հաւաքուած է 24,000 բուբլի և յոյս կայ դարձեալ հաւաքվելու։ Այս փողը առհասարակ հաւաքում են նշանաւոր դրամատէրերից, որը յետոյ դարձեալ պիտի վերադարձնէին իրանց։ Գովելի է այն այս մտադրութիւնը։ Միայն այս միջոցը կարող է ազատել մեր չքաւոր ընտանիքներին նեղութենից. և այսպիսի ընտանիքների թիւը քիչ չէ. նա անցնում 1200—ից։»

«Обзоръ» լրագիրը լսել է, որ կովկասեան ուսումնարանական հոգաբարձու, պ. Եանովսկի, առաջարկել է բարձրագոյն կառավարութեանը տեղափոխել Թիֆլիս Ս. Պետերբուրգի համալսարանի արևելեան ֆակուլտէտը։ Չենք կարող ամբողջ սրտից չը համակրել պ. Եանովսկու առաջարկութեանը, որովհետև եթէ արևելեան բաժինը այստեղ կը լինի, նրա աշխատութիւնները մի կողմից աւելի արդիւնաւոր կը լինեն քան թէ Ս. Պետերբուրգում, իսկ միւս կողմից մի ֆակուլտէտ մեր քաղաքի մէջ ունենալով, այդպիսով հիմք կը դրվի կովկասեան ընդհանուր համալսարանին։

Յունվարի 26-ին, շաբաթ օր, Թիֆլիսի Ամարյան թատրոնում լինելու է մի ներկայացում յօգուտ սովատանջների, մասնակցութեամբ ռուս, հայ և վրացի դերասանների։ Այդ ներկայացման մէջ կը մասնակցեն տ. տ. Կոլցովա, Սիրանուշ, պ. պ. Իշիս. Էրիատով, Ադամեան և Սլավիանսկի իր խօրով։ Տոմսակները կարելի է ստանալ «Тифл. Вѣстн» լրագրի խմբագրատանը։

Այսօր երեքշաբթի, յունվարի 22-ին, Արծրունու թատրոնում, պ. Սլավիանսկի տալու է դարձեալ մի կոնցերտ։ Սկիզբը 8 ժամին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

Ահա և մի այլ դէպք, որ բաւականին վընասակար հետեւանքներ ունեցաւ հայերի համար. ամերիկացի քարոզիչները, քաջալերվելով կրօնական ազատութենից, եկան Թիւրքիա աւետարանը քարոզելու. կառավարութիւնը նրանց թոյլ տուեց երկրի խորքերը թափանցել, բայց խստիւ արգելեց նրանց մուսուլման ազգաբնակութեան մէջ որ և է քարոզութիւն սկսել, և նա թոյլ տուեց նրանց քրիստոնեաների մէջ տարածել իրանց քարոզութիւնը։ Այդ միսսիոնարներն, անշուշտ, մեծ ծառայութիւն արած կը լինէին հայերին, եթէ նրանք կարողանային աւետարանական քարոզութիւններով քաղաքակրթել այդ մուսուլման վայրենիներին, և անշուշտ հայերը նրանց երախտիքը չէին մոռանայ, բայց Բ. Դրան խորամանկութիւնը գործին ուրիշ ընթացք տուեց։

Նա թոյլ տուեց ամերիկական միսսիոնարներին քրիստոնեայ ազգաբնակութիւնների մէջ քարոզութիւններ անել, որ և երկպառակութիւն դցել քրիստոնեաների մէջ, որպէս զի նրանք սկսեն իրանց մէջ մէկմէկու հալածել։ Պէտք է խոստովանած, որ այս բանը պակաս չը նուազեցրեց հայկական տարրը։

Այս բաւական չէ որ Բ. Դուռը այսպիսի երկպառակութիւններով է կամենում թուլացնել հայկական տարրը, այլ և նա ամեն միջոցներ գործ է դնում գայթել տալով, թէ սպանութիւններով և թէ զանազան բարբարոսական հալածանքներով սպառել հայկական տարրը Փոքր Ասիայի մէջ. սա մի աշխարհ դիտաւորութիւն է։ Առաջներիս դրած բրոշիւրը թէպէտ և լիքն է պատմվածների նման հազար ու մի քստմնելի ու մարդկութեան կոչմանը ու պատուին ամօթ բերող անցքերով, բայց և այնպէս վերջացնում ենք մեր խոստացած քաղուածքը, յիշելով, որ յիշեալ տեղեկագիրը ստորագրված է Վ. Վ. Հայ պատգամաւոր։

Տեղեկագիրը ներկայացված է բրիտանական հիւպատոս մայոր Տրոտտէրին Էրզրումում անցեալ տարի սեպտեմբերի 16-ին։

Բրոշիւրի վերջը կան և մի քանի յաւելուածներ, որոնք նոյնպէս զարշելի ու ստոր բացուցիչ տեսարանների պատկերներ են, և մենք աւելորդ ենք համարում դրանց մասին այլ ևս խօսել. բայց և այնպէս անկարելի ենք համարում մեր ընթերցողների ուշադրութիւնը չը դարձնել և մի նշանաւոր կէտի վրա. բրիտանական հիւպատոս մայոր Տրոտտէր հիմնվելով Թիւրքաց կայսրութեան պաշտօնական սալնամէի (ստատիստիկա) վրա, յայտնում է անգլիական արտաքին գործերի մինիստրին ի Թիւս ուրիշ ստատիստիկաների և այն որ իբր Վանի նահանգում մուսուլման ազգաբնակութեան Թիւը 126,208 է, մինչդեռ քրիստոնեայ ազգաբնակութեան Թիւը այդ մի և նոյն նահանգում, միայն 97,555 է։ Էրզրումի տեղեկագրի հեղինակը գեղեցիկ կերպով ապացուցանում է այդ ստատիստիկայի սխալը։ Նա ասում է, որ երբէք ուշադրութիւն չը պէտք է դարձնել ոչ Թիւրքաց գիւղերի, և ոչ էլ նրանց տների բազմաթիւ լինելուն, որովհետև չը նայելով վերջինների Թիւերի բազմութեանը, նրանց մարդաբնակութիւնը հայերից անհամեմատ նուազ է, որովհետև Թիւրքաց նամէհրամն արգելում է մահմեդականի նայել իր եղբօր կնոջը, և այս պատճառով իւրաքանչիւր Թիւրք զրկված է ունենալ իր համար մի առանձին տուն, մինչդեռ հայերի մէջ հայր, եղբայրներ, ու փեսաներ ու հարսեր ապրում են մի և նոյն ընտանիքում և բոլորովին կարեալ համաձայնութեամբ. այս պատճառով էլ յաճախ կարելի է պատահել այնպիսի ընտանիքների, որոնց անդամները բաղկացած են 100—150 հոգուց։

Ահա մի ամենակարևոր կէտ, որ Թիւրքաց պաշտօնականները չեն բարեհաճել ի նկատի առնել, իրանց հռչակաւոր պաշտօնական ստատիստիկայի կազմակերպութեան ժամանակ։ Բայց այդ նրանց ինչ փոյթ, նրանք անում են այն ինչ որ նրանց հրամայված է, կամ այն ինչ որ նրանց նպատակայարմար է...։

Ընթերցո՛ղ, անշուշտ, այս առաջին անգամը չէ, որ դուք կարդում էք Հայաստանի—ձեր հայրենիքի այս զարհուրելի ու եղեռնագործ նկարագրութիւնները, այս անխիղճ ու գազանային կոտորածներն ու սրածութիւնները. ասացէ՛ք, խնդրեմ, ի՞նչ տրամադրութեան մէջ էք զգում դուք ձեզ, երբ կարդում էք այս զգուելի տողերը, կարծեմ ամեն մէկը ձեզնից վառվում է մի կատաղի վրէժխնդրութեամբ։ Բայց ասացէք, խնդրեմ, ի՞նչ գազարար կազմել մի ժողովրդի վրա, որը տանում է այս տեսակ անարգ ու բռնակալական հալածանքներ. նրան ծեծում են, չարչարում են, հալածում են, ծաղրում են, նրանից ուժից բարձր հարկեր են խլում, գողանում, յափշտակում են նրա հարստութիւնը, հողերը, նրան անասունի տեղ են դնում ու դատարանի մէջ չեն ընդունում նրա վկայութիւնը, նա բողոքում է, որ նրա տաւարը յափշտակեցին, նա ցոյց է տալի աւազակին, և դատարանից դարձեալ ինքն է մեղաւոր դուրս գալիս.—այս բոլորը կարելի է տանել, բայց ի՞նչպէս է կարողանում նա տանել երբ վիրաւորում են նրա ընտանեկան պատիւը, երբ նրան կողոպտելուց յետոյ, աչքի առաջ բռնաբարում ու անպատուում են նրա ամուսնուն, աղջկանը, որդուն կամ քրոջը, ի՞նչպէս է նա կարողանում տանել, երբ պըղծում են սուրբ տաճարն ու դրան ճակատից կախում սատկած շունը...ի՞նչպէս նա հազար անգամ գերեզման չէ մտնում։ Ի՞նչու հազար դաշոյն չէ ցցում իր սիրտն ու չէ ազատվում այդ քստմնելի տեսարաններին հանդիսատես լինելուց։

Ճշմարիտ երբ մարդ մտածում է, նա ակամայ այն եզրակացութեանն է գալի, թէ արդեօք այդ մարդիկը կովի՞ր են, ոչխարներ են, անասուններ են, ի՞նչ են, զգացմունք չունե՞ն, պատասխանատուութիւն չունե՞ն, որ կարողանում են տանել այս տեսակ գազանային անարգութիւններ։

Եւ վերջապէս մինչև ե՞րբ այսպէս ապրել, մինչև ե՞րբ ձանձրացնել աշխարհին այսպիսի զզուելի ու անարգական բողոքներով։ Բիւր անգամ աւելի լաւ չէ՞ կորչել, բոլորովին անհետանալ աշխարհի երեսից, քան թէ այսպիսի ստորութեամբ ապրել և ձանձրացնել ուրիշներին։

Ասենք թէ մեր Թիւրքիայի եղբայրների մարդկային զգացմունքները բթացել են. բայց և այնպէս, մենք սրտով ցանկանում ենք, որ նրանց անհետանալուց առաջ գոնէ մի անգամ էլ դուրս գան այդ կեղտոտ ցեխից, և փառքով անհետանան։ Նրանք դեռ արժանի են կարեկցութեան, որովհետև գիտենք, թէ ինչ բարբարոս մեքենայութիւններ հասցրին նրան այդ բթութեանը։

Խեղճ հայրենակիցներ, թողէ՛ք, թողէ՛ք մի բոպէ աւետարանական քարոզութեան վհ մոքերը. փորձեցէ՛ք փոքր ինչ քրդերին քրդաբար պատասխանել ու Թիւրքերին էլ անիրաւաբար, և մենք համոզված ենք, որ ձեր յարաբերութիւններն ուրիշ կերպարանք կը ստանան։ «Եթէ քո մի երեսին ապտակ խփեն, դարձրու և միւսը», «Եթէ շապիկդ խլեն, բաճկոնդ էլ հետը թող։» Անշուշտ, ոչինչ չունենք այս մարդասիրական վեհ մոքերի դէմ, բայց ասում են «փլաւ ուտելը լաւ բան է, բայց մի օր մեր տանը, մի օր էլ ձեր տանը։»

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ